10219361

Բանասիրական

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Թուղթ Պիղատոսի դատաւորի առ Տիբեր կայսրն, զոր գրեաց յաղագս խաչելութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ :

Քանի մը հայկական ձեռագիրներու մէջ Պիղատոսի առ Տիբեր կայսրը գրած թուղթ մը կը գտնուի Քրիստոսի մահուանը վրայօք, հանդերձ համառօտ պատմութեամբ մը Պիղատոսի Հռոմ կանչուելուն ու սպաննուելուն, և Տիբեր կայսեր թղթով մը առ Լիկիանէս նախարար՝ Հրէից ազգին համար : Այս թէպէտ անվաւեր թղթեր կ'երեւան ասոնք ու պատմութիւնը՝ անհիմն, և յոյն կամ ասորի մատենագրի մը կեղծիք, ուսկից հաւանականապէս մեր նախնիքը թարգմաներ են, սակայն հնախօսութիւն սիրողներուն համար հետաքննական բան մը կրնան սեպուիլ. անոր համար մենք ալ այս դիտմամբ կը հրատարակենք զանոնք : Բայց որովհետեւ բոլորովին նման չեն իրարու այդ ձեռագիրները, աւելի գլխաւոր տարբերութիւններ ունեցող երկու ձեռագիրներ ընտրեցինք, ու երկու բնագիրները մէկտեղ 'ի լոյս կ'ընծայենք :

Ինքնակալիդ սեբաստիայ փառաւորի և հզօրի Տիբերայ կայսեր, 'ի Պիղատոսէ դատաւորէ Պաղեստինեայ և Փիւնիկոյ խնդալ :

Հարկ եղև ինձ գրել առ մեծութիւդ քո զիրս զայս, ուստի անկաւ ահ 'ի վերայ իմ 'ի դժնդակ պատահմանէս, որում ականատես եղէ ես : Քանզի է քաղաք մի յիշխանութեանս իմում, որ կոչի Երուսաղէմ, ուր ամենայն բազմութիւնք Հրէիցն են ժողովեալ. ետուն 'ի ձեռս իմ զայր մի, որում անունն էր Յիսուս : Ի Հրէաստանի բազում սքանչելիս արար, զոր պատմեմ քեզ. զանդամալոյծն առողջացուցանէր, զկոյրսն լուսաւորէր, զկաղսն գնացուցանէր, խլից լսել տայր, և համրոց խօսել. այլ և զմեռեալս յարուցանէր, և զդևսն 'ի մարդկանէ հալածէր : Այլ այլ բազում նշանս և արուեստս արար, և սքանչելիս գործեաց, զոր ոչ է լսեալ մարդոյ յաշխարհիս :

Ինքնակալիդ սեբաստիայ փառաւորի և հզօրի Տիբերեայ կայսեր, 'ի Պիղատոսէ դատաւորէ արևելից կողմանս Պաղեստինեայ և Փիւնիկոյ՝ արքայի խնդալ :

Հարկ եղև ինձ գրել առ մեծութիւդ քո զահս որ անկաւ 'ի վերայ իմ 'ի դժնդակ պատահմանէս, որում ականատես եղէ ես : Քանզի է քաղաք մի յիշխանութեանս իմում՝ որ կոչի Երուսաղէմ, ուր ամենայն բազմութիւնք Հրէից ժողովեալ էին աստ, և ետուն 'ի ձեռս իմ զայր մի՝ որում անունն էր Յիսուս, վասն որոյ աւետիս ունէին հարքն նոցա՝ եթէ առաքէ Աստուած զսուրբն յերկնից, որ և թագաւոր կոչեսցի Իսրայէլի. զոր խոստացեալ Աստուածն յերկնից 'ի ձեռն կուսի յերկիր առաքել. որ յիմում դատաւորութեանս 'ի Հրէաստանի բազում սքանչելիս արար, զոր պատմեմ քեզ : Քանզի մի հերձուածոյն զոր դնէին 'ի վերայ նորա՝ այն էր եթէ զշաբաթս ոչ պահէ, զոր յոյժ մեծարէին սոքա ազգս Հրէից զպահպանութիւն շաբաթուն. այլ նա այսու լուծանէր, զի զանդամալոյծս առողջացուցանէր, զկոյրսն լուսաւորէր,

Զնա Հերովդէս, և Արքեղայոս, Փիլիպպոս, Աննա, և Կայիափա մատնեցին ՚ի ձեռս իմ: Իբրև ոչ կամեցայ խաչել զնա, բազում ժխորումն և աղաղակ արարին ՚ի վերայ իմ: Եւ յոլով արարեալ քննութիւն, ոչ ինչ վնաս գտի ՚ի նմա. բայց զի ոչ կարացի հաւանեցուցանել զնոսա, առեալ տարան խաչեցին զնա: Եւ ահա խաւար կալաւ

և զկաղսն գնացուցանէր, խլից լսել տայր, և համրց խօսիլ: Այլ և զմեռեալս յարուցանէր նա. այլ և զայր մի մեռեալ հոտեալ և նեխեալ զկնի չորից աւուրց յանուանէ կոչեաց զնա ՚ի գերեզմանէն լի առողջութեամբ և ամենայն անուշահոտութեամբ, ձեռօքն կապելօք և ոտիւքն երիզապնդօք և երեսօքն վարշամակապատօք արտաքս եհան ՚ի գերեզմանէն կենդանի: Եւ զոմանս այսահարս յանապատ տեղիս շրջելով և ուտելով զմարմինս իւրեանց՝ ողջացուցեալ բնակիչս քաղաքաց կացուցանէր, զոր բանիւ միայն համեստացուցեալ՝ զօրաւորս և փառաւորս և հաւատարս ՚ի գործս և ՚ի կերակուրս ընդ այլս և ՚ի խօսելն զրուցաց ամենեւին զգաստ երևեցուցեալ. իսկ զպիղծ դևսն զբնակեալսն ՚ի նոսա ցխորս ծովուն յանդունդս առաքէր: Եւ զայր մի, որոյ մի կողմն գօսացեալ էր, և ոչ գոյր ՚ի նմա նմանութիւն մարդոյ ամենեւին, բանիւ ողջացուցեալ գեղեցիկս ցուցանէր: Եւ կին ոմն արիւնաբուխ, որոյ ցամաքեալ էր մարմինն և երակք անձին, և անկեալ կեայր իբրև զմեռեալ, զոր բազում բժիշկ ոչ կարացին բժշկել, քանզի ոչ կայր կենդանութիւն. յորոյ տունն խորհրդեամբ երթեալ Յիսուս, և բազում ժողովուրդ զհետ նորա, և նա սակաւ մի շարժեալ զինքն բուռն եհար զհանդերձէն Յիսուսի, և այնպէս ողջացեալ կանգնեցաւ, որպէս թէ բնաւ չէ վտանգեալ ինչ. որ իբրև զթռչունս երագաթևս երթայր ՚ի քաղաքն իւր ՚ի Կափառնաում, որ էր եօթն աւուր ճանապարհ: Զայսպիսի սքանչելիս առնէր նա ՚ի շաբաթու: Եւ այլ բազում նշանս գործեաց նա, զոր ոչ էր մարդոյ գործեալ, կամ լուեալ աշխարհի: Զնա Հերովդէս և Արքեղայոս, Աննա և Կայիափա մատնեցին ՚ի ձեռս իմ: Իբրև ոչ կամեցայ խաչել զնա, բազում ժխորումն և աղաղակ արարին ՚ի վերայ իմ: Եւ յոլով քննութիւն արարեալ, ոչ ինչ վնաս գտի ՚ի նմա. բայց զի ոչ կարացի հաւանեցուցանել զնոսա, առեալ տարան զնա խաչեցին: Եւ խա-

զամենայն տիեզերս 'ի մէջօրէի. զի արեգակն և լուսին և աստեղք մթացան, որ ընաւ ոչ գոյր 'ի նոսա լոյս. և անդունդք դողացեալ պատառեցան 'ի յահէ փառաց նորա, և բազում մեռեալք յարեան, որպէս և Հրեայքն վկայեցին՝ թէ Ահաւասիկ տեսաք զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ, երկոտասան նախապետօքն. զոր և ես իսկ տեսի յարուցեալ 'ի մեռելոց, որք և լային իսկ յաղագս չար գործոց և անօրէնութեան նոցա: Այլ մնայր երկիւղ շարժմանն 'ի վեց ժամէ աւուրն մինչև ցինն ժամն: Այլ 'ի խաչէն իջուցեալ թաղեցին զնա, և մատանեաւն իւրեանց կնքեցին զգերեզմանն: Այլ ետու ես պահապանս գերեզմանին. և նոքա եկեալ այսպէս ասացին. Իբրև գայր երեկոյ շաբաթուն, յորում միաշաբաթն լուսանայր, թնդիւն եղեւ յերկնից, և երկիրս պայծառացաւ եօթնապատիկ լուսով քան զսովորական աւուրսն:

ւոր կալաւ զամենայն տիեզերս 'ի մէջօրէի. զի արեգակն և լուսինն և աստեղք մթացան այնքան, որ ընաւ ոչ գոյր 'ի նոսա ճաճանչ լուսոյ. վասն զի ամսոյ չորեքտասան էր, և լուսինն 'ի ներքին կիսագունդն էր, և հինգ կենդանակերպն գնացեալ էր և 'ի կոյս կենդանակերպ մտեալ: Այլ յորժամ Յիսուս խաչեցաւ, էր օրն ուրբաթ և ժամն վեցերորդ 'ի հասարակել աւուրն: Այլ զի գարնանայինն էր եղանակն, և արեգակն 'ի խոյն էր, և խոյն 'ի վերին կիսագունդն, և կշիռն 'ի ներքին կիսագունդն՝ յորում էր լուսինն. և անտի դարձեալ յղեաց զհինգ կենդանակերպն, և եկեալ եմուտ 'ի խոյն, և անցեալ 'ի ներքոյ արեգականն՝ խաւարեցոյց զնա: Այլ և երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան 'ի դողմանէ անդնդոց որ յահէ փառացն Յիսուսի: Այլ յարեան մեռեալք 'ի գերեզմանաց, որպէս և նոքեանք իսկ Հրեայքն վկայեցին՝ թէ Տեսաք զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ հանդերձ երկոտասան նահապետօքն, և այլ ևս բազմութեամբ մարգարէիւք իւրեանց, զոր նոքեանք իսկ գիտէին և ճանաչէին զնոսա. քանզի յերկնից ժամանակաց յարեան մեռեալքն 'ի հնոցն հետէ՝ յԱբրահամու և 'ի մարգարէիցն, և յայնցանէ՝ զոր նոքեանք թաղեալ էին յընտանեաց իւրեանց և յազգականաց յամնոց. ես իսկ Պիղատոս տեսի յարուցեալ 'ի մեռելոց, որք և լային իսկ յաղագս չարագործաց, և անօրէնութեան Հրէիցն որ խաչեցին զՅիսուս: Այլ մնաց ահ շարժմանն 'ի վեց ժամէ աւուրն ուրբաթուն մինչև յինն ժամն: Այլ 'ի խաչէն իջուցեալ թաղեցին զնա. և մատանեաւ իւրեանց կնքեցին զգերեզմանն, և եկեալ խնդրեցին յինէն զուշակս, և ես ետու զինուորս պահապան գերեզմանին, զոր նոքեանք կամէին: Այլ զինուորքն եկեալ 'ի միաշաբաթու առաւօտու այսպէս ասացին՝ թէ յերեկոյի շաբաթուն յորում միաշաբաթն լուսանայր՝ թնդիւն եղև յերկնից, և երկիրս պայծառացաւ լուսով եօթնապատիկ առաւել

Եւ յերրորդ ժամու գիշերոյն՝ երեւեցան պայծառ լուսովն անթիւ բազմութիւնք, որք աղաղակէին գոչելով. Յիսուս Քրիստոս խաչեալ Աստուած մեր յարեաւ 'ի մեռելոց. ելէք 'ի դժոխոց որք ըմբռնեալ էք 'ի ծառայութիւն մահու բանտարկութին 'ի խորս անդնդոց: Եւ այնպէս բանայր զպատըռուած երկրին, որպէս թէ ոչ լեալ իցէ 'ի սկզբանէ. քանզի երեւեցան ամենայն հիմունք աշխարհի: Իսկ զկնի աղաղակելոյ նոցա, և շրջելոյն 'ի մէջի յարուցելոցն 'ի մեռելոց, կնքեալ Տեառն Յիսուսի զդժոխսն, և ասէ ցնոսա. Երթայք ասացէք աշակերտաց իմոց, զի 'ի Գալիլեա եկեսցեն և տեսցեն զիս: Եւ գիշերն ամենայն ոչ շիջաւ լոյսն անձառելի: Եւ բազումք 'ի Հրէիցն անկան 'ի պատըռուածն և կորեան, զորս 'ի վաղիւն խնդրեալ ոչ գտին: Եւ զայս ամենայն ստուգութեամբ 'ի յաշհէ հրաշալի տեսլեան պատմեցի ինքնակալութեանդ քում. ողջ լեր:

Եւ իբրեւ եհաս հրովարտակն 'ի Հռոմ, և ընթերցան առաջի կայսերն և

քան զարեգակնն: Եւ 'ի հասանել գիշերոյն՝ երեւեցան պայծառ լուսով անթիւ բազմութիւնք լուսակերպ արանց, որ աղաղակէին ասելով. Քրիստոս Յիսուս խաչելեալն Աստուած մեր յարեաւ 'ի մեռելոց. ելէք 'ի դժոխոցդ, որ ըմբռնեալ էք 'ի ծառայութիւն մահու բանտարկութին. արիք 'ի խորոցդ անդընդոցդ 'ի բարձունս երկնից. արիք և այլ մի յամէք 'ի խորս դժոխոցդ. որ կապեալդ էք՝ ելէք, և որք 'ի խաւարիդ էք՝ ելէք և յայտնեցարուք. զի խաչելեալն Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, և զձեզ յերկինս հրաւիրեաց: Եւ յահագին շարժմանէն, և 'ի նոցա ձայնէն՝ այնպէս բանայր զպատըռուած երկրին, մինչեւ երեւեցան հիմունք աշխարհի: Իսկ զկնի աղաղակելոյն լուսաւոր արանցն, և յարուցեալն 'ի մեռելոց երեւիւր 'ի մէջի նոցա. և ապա Տեառն Յիսուսի կնքեալ զդժոխսն՝ ասելով. Արի, Ադամ, և կանգնեաց 'ի մեռելոց. արի որ ննջեսդ 'ի խաւարի, որ լուսաւորեաց զքեզ լոյս իմ. արի և զօրացիր որ նստիսդ 'ի խաւարի. արի և զգեցիր զանմահութիւն որ 'ի ստուերս մահու նստէիրդ. արի և առ զարձակումն որ կապեալ կայիր յաղքատութենէ որպէս երկաթի: Եւ զայս ասացեալ վերացաւ յերկինս. բայց պատուէր ետ լուսակերպ արանցն ասելով՝ թէ Զորս տեսանէք 'ի բարեկամացն իմոց եկեալ աստէն 'ի խնկել զգերեզմանս իմ, պատուէր տուք նոցա երթալ ասել եղբարց իմոց զի երթիցեն 'ի Գալիլեա և անդէն տեսանիցեն զիս: Զայս ասաց, և ապա վերացաւ յերկինս: Եւ զգիշերն ամենայն ոչ շիջաւ լոյսն պայծառ անձառելի: Եւ բազումք 'ի Հրէիցն անկեալ 'ի պատըռուած երկրին կորեան, զորս 'ի վաղիւն խնդրեալ ոչ գտին: Եւ զայս ամենայն ստուգութեամբ 'ի յաշհէ հրաշալի տեսլեանն պատմեցին մեզ զինուորքն. և մեք ծանուցաք ինքնակալութեանդ քում. ողջ լեր:

Եւ 'ի հասանել նամակիս այս 'ի Հռոմ, և ընթերցան առաջի կայսերն,

մեծամեծաց իւրոց. իբրև լուան, հիացան և զարմացան, զահի հարան և երկեան յոյժ, և ասեն. Ուրեմն չարութիւն Պիղատոսի արար զխաւարն զայն, և զշարժումն ամենայն տիեզերաց: Եւ բարկացեալ կայսրն առաքեաց զզինուորս, և ետ ածել կապանօք զՊիղատոս 'ի Հռոմ: Եւ նստեալ կայսրն 'ի տաճարի կռոց ամենայն մեծամեծօքն, և ետ ածել զՊիղատոս առաջի իւր, և ասէ ցնա. Երիցս Թշուառական, ընդէ՞ր իշխեցեր և յանդգնեցար գործել զայնպիսի իրոն յայրն յայն յՈրդին Աստուծոյ, որ կորուսանել կամէր զամենայն արարածս: Ասէ Պիղատոս. Ով ինքնակալ, անպարտ եմ ես յարենէ նորա. այլ նախարարք Հրէիցն, և ամենայն ժողովուրդքն եղեն դատապարտողք նորա: Ասէ կայսրն. Եւ ո՞յք են զոր ասեսդ: Ասէ Պիղատոս. Հերովդէս, և Փիլիպպոս, Աննա և Կայիափա, և այլ ժողովուրդքն ամենայն: Կայսրն ասէ. Զիա՞րդ լուռ եղեր նոցա: Ասէ Պիղատոս. Իրք են և անհնազանդ իշխանաց ազգն Հրէից: Կայսրն ասէ. Պարտ էր քեզ պահել զգուշութեամբ զայնպիսի փրկիչն աշխարհի, Թէ կամօք իւրով եկեալ էր 'ի խաչել, և նա ինքն էր Քրիստոս Թագաւոր Հրէից: Եւ իբրև յիշեաց կայսրն զանունն Քրիստոսի, կուռքն ամենայն անկեալ կործանեցան, որք էին 'ի տաճարին, և եղեն մանր իբրև զփոշի: Եւ կայսրն և ամենայն բազմութիւնքն պակեան ահիւ, և յարուցեալ դողալով փախեան 'ի տեղւոջէն: Եւ վաղիւն ուշաբերեալ կայսրն, և արարեալ հանդէս՝ նստաւ 'ի Կապիտելիոնն, և ետ ածել զՊիղատոս առաջի: Ասէ կայսրն. Եղկելի անձն և Թշուառական, ահաւասիկ վասն չարեաց քոց կործանեցան դիքն մեր. արդ ասասցես մեզ, ո՞վ էր ահաւորն՝ որոյ անունն կործանեաց զչաստուածսն մեր: Ասէ Պիղատոս. Ճշմարիտ Որդի Աստուծոյ էր նա, զի գրեալ է 'ի մարգարէսն Հրէից՝ Թէ Ոչ ոք է նման նմա յաստուածսն հեթանոսաց: Եւ իբրև զայս ասաց Պիղատոս, 'ի նմին ժամու

լինելով առ նմա և բազմաց 'ի մեծամեծաց իւրեանց. որք իբրև լուան, հիացան և զարմացան, զահի հարան և երկեան յոյժ և ասեն ցմիմեանս. Ուրեմն չարութիւն Պիղատոսի արար զխաւարումն և շարժումն ամենայն տիեզերաց: Եւ կայսրն բարկացեալ առաքեաց զինուորս, և ետ կապանօք տանել զՊիղատոս 'ի Հռոմ: Եւ նստեալ կայսրն 'ի տաճար կռոցն սինկղիտոսօքն և ամենայն մեծամեծօքն, և ետ ածել զՊիղատոս առաջի իւր, և ասէ ցնա. Երիցս Թշուառական, զիա՞րդ իշխեցեր և յանդգնեցար գործել զայնպիսի իրս յայրն յայն Որդին Աստուծոյ, որ կեցուցանել կամէր զամենայն տիեզերս: Ասէ Պիղատոս. Ով ինքնակալդ, անպարտ եմ ես յարենէ նորա. այլ նախարարք Հրէիցն, և ամենայն ժողովուրդն եղեն դատապարտող նորա: Ասէ կայսրն. Եւ ո՞յք են զոր ասեսդ: Ասէ Պիղատոս. Հերովդէս և Փիլիպպոս, Աննա և Կայիափա, և այլ ամենայն ժողովուրդն: Կայսրն ասէ. Եւ դու զիա՞րդ լուռ եղեր նոցա: Ասէ Պիղատոս. Իրք և անհնազանդք են իշխանաց ազգն Հրէից: Կայսրն ասէ. Պարտ էր քեզ պահել զգուշութեամբ զայնպիսի փրկիչն աշխարհի, Թէ և կամաւ իւրով եկեալ էր 'ի մահն խաչի. զի նա ինքն է Թագաւոր Հրէից: Յայնժամ իբրև յիշեաց կայսրն զանունն Քրիստոսի, ամենայն կուռքն անկեալ կործանեցան, և եղեն մանր իբրև զփոշի: Եւ կայսրն և ամենայն բազմութիւն պակեան ահիւ, և յարուցեալ դողալով փախեան 'ի տեղւոջէն: Եւ 'ի վաղիւն ուշաբերեալ կայսրն, և արարեալ հանդէս նստաւ 'ի Կապետոլին. և ետ ածել զՊիղատոս առաջի իւր, և ասէ ցնա. Եղկելի անձն, ահաւասիկ վասն չարեաց քոց կործանեցան դիքն մեր. արդ ասա մեզ՝ ո՞վ էր ահաւորն այն, որոյ անունն կործանեաց զչաստուածսն մեր: Պիղատոս ասէ. Ճշմարիտ յիշատակարան նորա գըրեալ է 'ի մարգարէսն Հրէից՝ Թէ Ոչ ոք է նման նմա յաստուածսն հեթանոսաց. որում և ես իսկ հաւանեցայ

ցուագարք և ախտաժէտք որ էին 'ի ժողովրդեանն՝ առողջացան. և կրկին հիացումն կալաւ զամենեսեան: Այլ ասէ կայսրն. Այնպիսի հրաշալի և սքանչելագործ էր Յիսուսն այն, որոյ անունն զայս ամենայն սքանչելիս արար, և դու զիա՞րդ իշխեցեր ածել 'ի վերայ նորա չարչարանս եղկելի: Ասէ Պիղատոս. Արքայ քաջ, ոչ այդպէս է, տէր իմ, այլ յաղագս անիծեալ և անօրէն ազգին Հրէից որ նենգեցին ինձ: Սրտմտեալ կայսրն, և գրեաց հանդերձ ամենայն մեծամեծօքն Հռոմայեցւոց վասն կատաղի ազգին Հրէից այսպէս:

Լիկիանոսի նախարարի կողմանցդ արևելից խնդալ:

Ծանիցես զյանդգնութիւնդ Երուսաղեմի, զոր ինչ արարին անօրէնութի 'ի վերայ Տեառն Աստուծոյ Որդւոյն Աստուծոյ. այն՝ որ 'ի Պիղատոսէ ամբարշտէ դատապարտեալ եղ 'ի խաչ. որ յաղագս անիրաւ չարչարանացն խաւար կալաւ զամենայն ծագս աշխարհի՝ մինչև 'ի մերձ կործանել: Արդ իմով հրամանաւն երթիցես ամենայն զօրօք 'ի կողմանս այդոքիկ, և առցես 'ի գերութիւն զամենայն բնակիչք նոցա. և հրամանաւս այսու ածիցես 'ի վերայ նոցա զամենայն վիշտ չարչարանաց և նեղութեանց ըստ արժանեաց իւրեանց. և ցրուեսցես զամենայն ազգս նոցա ընդ ամենայն հեթանոսս 'ի ծառայութիւն, զի մի բնաւ երևեսցին նոքա 'ի վերայ երկրի. քանզի լի են նոքա բազում չարութեամբք, որպէս լուայ յԱբգար թագաւորէ Հայոց:

Իբրև էառ զհրամանս զայս Լիկիանէ 'ի կայսերէ, երթեալ կատարէր զհրամանս նորա: Այլ նա զոմանս ընդ սուր ածելով, և զոմանս ընդ ծառայութիւն հեթանոսաց, և 'ի գերութիւն ցրուէր զնոսա ընդ ամենայն երկիր: Այլ լուեալ կայսերն զոր ինչ արար Լիկիանէ, հաճոյ եղև նմա: Այլ ապա ետ հրա-

սքանչելեացն, զոր տեսի և լուայ: Ասէ կայսրն. Այլ դու զիա՞րդ ածեր 'ի վերայ նորա չարչարանս, որ այդպէս ասես զնմանէ. ո՞չ ապաքէն յաղագս հակառակութեան թագաւորութեանս իմոյ, որպէս և գրեաց առ իս արքայն Հայոց Աբգար միանգամ և երկիցս վասն չարութեան քո: Ասէ Պիղատոս. Արքայ քաջ, ոչ է այդպէս, տէր կայսր, այլ յաղագս անաստուածից և անօրէն ազգին Հրէից, զի նենգեցին ինձ: Ընդ որ սրտմտեալ կայսրն, և գրեաց հանդերձ սինկղիտոսօքն և ամենայն մեծամեծօքն Հռոմայեցւոցն վասն տիրասպան ազգին Հրէից այսպէս:

Լիկիանոսի նախարարի կողմանցդ արևելից խնդալ:

Ծանիցես զանօրէնութիւնդ Երուսաղեմի, զոր ինչ արարին յանդգնութեամբ 'ի վերայ Տեառն Յիսուսի Որդւոյն Աստուծոյ. այն՝ որ 'ի Պիղատոսէ յամբարշտէ դատապարտեալ խաչեցաւ. որ յաղագս անիրաւ չարչարանացն՝ երկիր շարժեցաւ, և խաւար կալաւ զտիեզերս ամենայն: Արդ կամ լիցի քեզ և իմոյս հրամանաւ երթալ բազում զօրօք 'ի կողմանսդ յայդոսիկ, և առցես 'ի գերութիւն զամենայն բնակիչս նոցա զազգդ Հրէից. և հրամանաւս այսու ածիցես 'ի վերայ դոցա վիշտս չարչարանաց և նեղութեանց ըստ արժանեաց իւրեանց. և ցրուեսցես զազգդ Հրէից ընդ ամենայն հեթանոսս 'ի ծառայութիւն, զի մի բնաւ երևեսցի տէրութիւն նոցա 'ի վերայ երկրի. քանզի լի են նոքա բազում չարութեամբ, որպէս լուաք յԱբգար թագաւորէ Հայոց:

Իբրև էառ զհրամանս զայս Լիկիանէսն 'ի կայսերէն, երթեալ կատարէր զհրամանս նորա. և զբազումս ընդ սուր ածելով, և զոմանս ընդ ծառայութիւն հեթանոսաց, և 'ի գերութիւն վարէր և ցրուէր ընդ ամենայն երկիր, ուր և կան մինչև ցայսօր ժամանակի: Այլ լուեալ կայսրն զոր ինչ արար Լիկիանէ,

ման Աղփիտոսի ումեմն վասն Պիղատոսի, և ասէ. Ա՛ռ զդա և չարաչար մահուամբ սատակեա. զի դա ամբարշտութեամբն իւրով ձգեաց զձեռն յարդարն յայն, որ Քրիստոսն կոչէր. վասն որոյ նշաւակեա զդա, որ կամօք իւրովք հեռի եղև 'ի փրկութենէ։ Եւ նա բազում և դառնագոյն տանջանօք չարչարեալ 'ի բազում աւուրս, և յետոյ հատեալ զգլուխ Պիղատոսի։ Եւ այսոցիկ այսպէս գործելոցն՝ փառաւոր լինէր անուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ամենայն տեղիս, և փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

և հաճոյ եղև նմա։ Եւ ապա ետ հրաման Աղփիտոսի ումեմն վասն Պիղատոսի, և ասէ. Ա՛ռ զդա, և կտրեա՛յ զգլուխ դորա. զի դա ամբարշտութեամբն իւրով ձգեաց զձեռն իւր յարդարն յայն, որ Քրիստոսն կոչիւր. զայն, ասէ, որ յաւագ ուրբաթին նստաւ Պիղատոս 'ի վերայ բեմբին և Յիսուս կայր դատապարտեալ առաջի նորա. և նա ինքն Պիղատոս զան հարեալ զՅիսուս, և մտրակեաց զաւազանաւն զոր 'ի ձեռն ունէր զթիկունս Յիսուսի, և ետ 'ի ձեռս Հրէիցն, և մատնեաց կամաց նոցա՝ զի 'ի խաչ ելանիցէ. վասն որոյ նշաւակեսցի դա, որ կամաւն իւրով հեռի եղև 'ի փրկութենէ իւրմէ։ Եւ այսպէս այսոցիկ գործելոց՝ փառաւոր լինէր անունն Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ամենայն տիեզերս առ ամենեսեան. և նմա փառք յաւիտեանս, ամէն։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Անքըդիլ Տիւբերոնի Հնդկաստանի մէջ ըրած ճամբորդութիւնները՝ Զրադաշտայ գրքերը գտնելու համար: (Տես երես 221)

Անքըդիլին պատմութեան հետաքըննական մասերէն մէկն ալ իր գրաւորական աշխատութիւններն ու Կուզրատի փաշային հետ ունեցած յարաբերութիւններն են։ Մալապարի ծովեզերքները ասդին անդին պտըտելէն ետքը, ու թերակղզւոյն ներսերը մըտնալէն ետքը՝ իր յանդուգն հետաքըրքրութիւնը լեցընելու համար, որով շատ տեսակ մեծամեծ վտանգներու մէջ ինկաւ, Սուրատի մէջ հաստատեց իր բնակութիւնը։

“ Հոն, շատ անգամ երթալ գալէն ետքը, կ՚ըսէ Անքըդիլ, կրցայ տեսնել փարսերուն տէստուրները, որոնց համար աս ճամբորդութիւնս ըրեր էի, և անոնցմէ կ՚ուզէի տեղեկանալ Զրադաշտայ կրօնքին վրայօք։ Ասոնք Տարապ ու Քաղուս ըսուած տէստուրներն էին, որոնք Սուրատի մէջ եղող փարսերուն մէկ կողման գլխաւոր կեցած էին։ Իրենց դանդաղութիւնը զիս կը յուսահատցընէր. հազիւ իրեք ամսէն ետքը տուին ինծի ան ձեռագիրը, որն որ ծախեր էին ինծի առաջ, ու ան ալ, ինչպէս որ ետքէն անդրադարձայ, փոփոխեր ու թղթեր կտրեր էին մէջէն։ Քիչ ժամանակուան մէջ ըրած յառաջադիմութիւնս աս գրքերը կարդալուն մէջ՝ իրենց անհաճոյ եղաւ, կարծելով որ թերևս քիչ ատենէն զիրենք կը ձգեմ։ Երթալով սկսան զգուշութեամբ պատասխան տալ իմ հարցմունքներուս, և սորվեցընելու ատեննին խորհրդական կերպ մը կը բանեցընէին, սեպելով որ անով աւելի պատկառելի կ՚ըլլան տուած դասերնին։ Ուշ ուշ կու գային ինծի, պատճառելով թէ նկատմանց համար կը վախնային յաճախելու իմ քովս։

„ Իմ վարպետներս ամենևին միտքերնին չէին անցըներ՝ թէ ես ուզե-